Նախորդի ամփոփոխ արտատպութիւնն է:

**4. Աշխարհացոյց Մովսիսի Խորենացոյ:**

Լույս է տեսել Մովսես Խորենացու Պատմութեան Գույիկմոս և Գևորգ Վիստոնների իրականացրած հրատարակութեան հետ մեկտեղ:

Ի Լոնտոն, 1786:

էջ 383—868:

Հայերեն ընթացիկը և լատիներեն թարգմանութիւնը: Թարգմանիչների առաջարկով և ծանոթագրութիւններով: Արտատպութիւնն է Մարսելի 1688 թ. հրատարակութեան:

**5. Աշխարհացոյց Մովսիսի Խորենացոյ: Յորում ընձեռի գմասանց աշ-խարհի և զճանաւոր գաւառաց, քաղաքաց և գետոց:**

Լույս է տեսել Մովսես Խորենացու Պատմութեան հետ միասին՝ Սարգիս Սարաֆյանի աշխատասիրութեան:

Պատմութիւնից հետո նոր տիտղոսաթերթով և նոր էջահամարով՝ «Հետեի համառոտ Պատմութիւն Աշխարհագրութեան: Արարեալ ի նոյնոյ հեղինակէ Մովսիսէ Խորենացոյ, քաջահմուտ և Յոգնահանձար վարդապետէ»:

Տպագրեցեալ հետևապէս՝ աշխատասիրութեամբ և արդեամբ այնցիկ, որոնց անուանքն նշանագրեցան ի յսկիզբսն:

Յամի Տեսան 1752. ի մայիսի 12: Ի Վենետիկ. ի տպարանի Անտոնի Գոթթոյի: Հրամանա Մեծատրաց:

92 էջ:

Արտատպութիւնն է Ամստերդամի 1688 թ. հրատարակութեան:

<sup>1</sup> Գ. Զարբանալյանը («Մատենագիտութիւն», էջ 320—321) թյուրի-մացարար գրքի հրատարակութեան վայրն է համարում Վենետիկը, իսկ Գ. Պատկանյանը («Из нового списка географий, приписываемой Можеев Хорезскому», տե՛ս ЖМНП, СПб, 1883, июнь, № 226, էջ 21), Կ. Կրումբախերը («Geschichte der Byzantinischen Literatur», München, 1898, էջ 411) և Հ. Պետրոսյանը («Հայ հին և միջնադարյան...», էջ 28)՝ Էջմիածնի:

<sup>2</sup> Տիտղոսաթերթում տպագրութեան վայրն ու տպարանի հիշատակու-թիւնը թացակայում են, զնչ ենք ըստ մատենագրական տվյալների:





բակությունում՝ «Géographie de Moïse de Corènes»:

Վենետիկ: Ի տպարանի Միխայելանց, 1881<sup>1</sup>:

46 էջ:

Հայերեն բնագիրը և ֆրանսերեն թարգմանությունը: Թարգմանչի առաջաբանով և ծանոթագրություններով: Հրատարակությունն իրականացվել է բոլորովին նոր ձևազարդ, որտեղ բնագիրն ավելի ընդարձակ է:

11. Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ:

Նախորդի Բ տպագրությունը:

Վենետիկ, ս. Ղազար, 1967<sup>2</sup>:

էջ 2—47:

Հայերեն բնագիրը և ֆրանսերեն թարգմանությունը:

### Բ. Թարգմանություններ այլ լեզուներով

12. Լատիներեն թարգմանություն Գուլիելմոս և Գեորգ Վիտտմաների.  
Mosis Chorenensis. Epitome geographiae.

Լույս է տեսել Մովսես Խորենացու Պատմության հետ միասին:  
Londini. MDCCXXXVI (1736)

էջ 333—368:

Հայերեն բնագիրը և լատիներեն թարգմանությունը:

13. Ռուսերեն թարգմանություն Հովսէսի Հովհաննիսյանի.

Моисея Хоренского География.

Լույս է տեսել Մովսես Խորենացու Պատմության հետ միասին՝ «Армянская история сочиненная Моисеемъ Хоренскимъ. Часть II, Санкт-Петербургъ, 1809 года» հրատարակությունում:

188—242 էջ:

Թարգմանչի առաջաբանով և ծանոթագրություններով: Թարգմանությունն իրականացվել է ըստ Վիտտմանյան հրատարակության:

14. Ֆրանսերեն թարգմանություն Սեն-Մարտենի.

Geographie attribuée à Moïse de Khoren.

Լույս է տեսել Սեն-Մարտենի աշխատասիրած երկհատոր՝ «Mémoires historiques et géographiques sur L' Arménie», ժողովածուի երկրորդ հատորում:

t. II, Paris, 1819.

էջ 301—304:

<sup>1</sup> Գրախոսությունները տե՛ս Աղ. Երիցյանց, «Արձագանք», ամսագիր, Թիֆլիս, 1882, № 2, էջ 28—28: K. Patkanian, «Museum», t. 2, Louvain, 1882, էջ 447—452 (ստորագր.՝ K. de Raistaing).

<sup>2</sup> Գրախոսությունը տե՛ս G. R. Cardone, Una recenta ristampa dell' Ašxarhaco'yc' Armeno, «Annali Instituto orientale di Napoli (Naples)», vol. 18 (1968), էջ 204—206.

Հայերեն բնագիրը և ֆրանսերեն թարգմանությունը:

15. Ռուսերեն այլ թարգմանություն Բ. Չատկանյանցի.

Армянская география VII века по Р. X. (приписываемая Моисею Хоренскому). Текст и перевод, с картинками и примечаниями. С. Петербург, 1877.

84+28 էջ:

Հայերեն բնագիրը և ռուսերեն թարգմանությունը:

16. Ֆրանսերեն այլ թարգմանություն Արսեն Սուրբյանի.

Géographie de Moïse de Corène d'après Ptolémée.

Texte arménien, traduit en français par le P. Arsène Soukry Mékhitariste.

Venise. St. Lazare, 1881.

VIII+62 էջ:

Հայերեն բնագիրը և ֆրանսերեն թարգմանությունը:

17. Արսեն Սուրբյանի ֆրանսերեն թարգմանության Բ տպագրությունը.

Géographie de Moïse de Corène d'après Ptolémée.

Venise, S. Lazare, 1967.

62 էջ:

Հայերեն բնագիրը և ֆրանսերեն թարգմանությունը:

### ԳԻՐԸ ՊԻՏՈՅԻՑ

18. Սրբոյ Քերթողաօր մերոյ Մովսէսի Խորենացոյ ճախակրթութիւն Հեռորական սաացեալ Գիրք Պիտոյից:

Զգուշաոր բաղդատութեամբ զանազան օրինակաց ի լոյս ընծայեալ և քննողական ծանօթութեամբք մեկնաբանեալ: Աշխատասիրութեամբ Տաառն Հ. Հովհաննէս Վարդապետի Ջոհրապետն Կոստանդնուպոլսեցոյ:

Յամին 1798<sup>1</sup>: Եւ ի թուականիս Հայոց ՌՄՄԵ: Ի Վենետիկ, ի վանս արոյ Ղազարու. Հրամանա մեծաորաց<sup>2</sup>:

488 էջ:

19. Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Յաղագս Պիտոյից:

Լույս է տեսել «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ մատենա-

<sup>1</sup> Հ. Պետրոսյանը («Հայ հին և միջնադարյան գրականության...», էջ 26) թյուրիմացաբար հրատարակության թվական է համարում 1790 թ.-ը, իսկ գրքի էջերի քանակը՝ 448, փխ. 488:

<sup>2</sup> Գրախոսությունը՝ A. Baumgartner, Ueber Das Buch «Die Chrie», տե՛ս «Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft», Bd. XL, Heft III, Leipzig, 1886, էջ 457—515: Տե՛ս նաև նույնն առանձին գրքով՝ Leipzig, 1886: Տե՛ս նաև նույնի հայերեն թարգմանությունը՝ «Բագ-մալիկա», 1887, № 10—12, էջ 306—314; 1888, № 1—3, էջ 20—30, № 7—9, էջ 208—211, № 10—12, էջ 328—328:









Լույս է տեսել «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք: Ի Վեներտիկ: Ի տպարանի Սրբոյն Ղազարո: Յամի 1848, ՌՄՂԲ» հատորում:  
Էջ 297—303:

29. Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Սրբոյ Հոփսիմեանց:

Լույս է տեսել «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք: Ի Վեներտիկ: Ի տպարանի Սրբոյն Ղազարո: Յամի 1865» հատորում:  
Էջ 297—303:

### ԹՂԹԵՐ

30. Սրբոյ Վարդապետացն Հայոց Մովսէսի և Դարթի հարցմունք ըստ երկարնակացն<sup>1</sup>:

Տե՛ս «Գիրք ծողովածոյ ընդդեմ երկարնակաց. մանաւանդ աշխարհաւեր ծողովոյն Քաղկեդոնի արարեալ սրբազանից վարդապետաց:

Նախ տրամաբանութիւն Մովսէսի և Դարթի»:  
Նոր Զուլա, տպարան Ամենափրկիչ վանքի, 1688:  
Էջ 8—272:

31. Յաղագս սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դարթի:

Տե՛ս Գ. Սրվանձտյանց, Հոնց և Նորոց. Պատմութիւն վասն Դարթի և Մովսէսի Խորենացոյ, Կ. Պոլիս:  
Էջ 89—87<sup>3</sup>:

32. Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դարթի Հարցմունք ըստ երկարնակացն:

Տե՛ս «Արարատ», ամսագիր, Վաղարշապատ, 1879, № 4, էջ 180—189, № 5, էջ 210—219 (որից հետո՝ ծանոթություն ներկա ձեռագրի առթիվ, էջ 217—219):

Հրատարակիչ՝ Կ. Կոստանյանց (ստորագր.՝ Կ. Կ.):

<sup>1</sup> Սույն թղթի մասին տե՛ս Ա. Ղազիկյան (էջ 206), Ա. Երիցյան, «Փորձ», ամսագիր, 1881, № 4, էջ 15, Ֆ. Կոնիբեր, «Հանդես ամսօրյա», 1903, № 5, էջ 152—155 և այլն:

<sup>2</sup> Գ. Զարբհանալյանը («Մատենագիտություն...», էջ 181) տպագրության տարեթիվը սխալմամբ համարում է 1681-ը, Գ. Լևոնյանը՝ 1696-ը («Հայ գրքի...», էջ 90), տե՛ս նաև «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ» (1512—1800), Երևան, 1963, էջ 42:

<sup>3</sup> Գրախոսությունը տե՛ս [Անտոռազիր], «Արշալույս Արարատյան», օրաթերթ, Ջմյունիա, 1875, 9 օգոստոսի, № 1020, էջ 8:

33. Աւանդութիւն վասն Մովսէսի Խորենացոյ:  
Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, մասն Բ, Վեներտիկ, 1901:  
Էջ 195—196:

34. Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դարթի, հարցմունք ընդ երկարնակ չարափառացն:

Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1903, № 5, էջ 152—155:  
Հրատարակիչ՝ Ֆ. Կոնիբեր:

35. Երանելոյն մեծի Քերթողահօրն Մովսէսի (Խորենացի) եպիսկոպոսի թուղթը:

Լույս է տեսել «Սամուելի քահանայի Անցելոյ Հուպսմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ: Վաղարշապատ: Ս. Էջմիածնի տպարան: 1893» գրքում, Ա. Տեր-Միքելյանի աշխատասիրությամբ:  
Էջ 255—261<sup>1</sup>:

36. Երանելի մեծ Քերթողահօրն Մովսէսի Խորենացի, եպիսկոպոսի թուղթը:  
Լույս է տեսել «Գիրք թղթոց: Թիֆլիս, 1901» հրատարակությունում:  
Էջ 22—28:

37. Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ. Պատասխանի թղթոյն Սահակայ յորում և բանք մարգարեականք և վասն փոխման Աստուածածնին թէ որպէս եղև կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի փայտն և թէ յոյր ձեռն և զինչ եղև պատճառք խնդրոյն կամ թէ լումմէ բերաւ ի հայս:

Լույս է տեսել «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ մատենագրութիւնք: Ի Վեներտիկ: Ի տպարանի Սրբոյն Ղազարո: Յամի 1848, ՌՄՂԲ» հատորում:  
Էջ 283—296<sup>2</sup>:

Որից առաջ զետեղված է՝ «Թուղթ Սահակայ Արծրունեաց իշխանի առ երանելի վարդապետն Մովսէսի Խորենացի» բնագիրը, էջ 281—282<sup>3</sup>:

38. Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ. Պատասխանի թղթոյն Սահակայ...:

Լույս է տեսել «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենա-

<sup>1</sup> Սույն թղթի մասին լայնորեն տե՛ս Մ. Արեղյան, Երկեր, հատ. Գ, էջ 394—396, 653—657:

<sup>2</sup> Սույն թղթի մասին տե՛ս Բ. Սարգիսյան, Քննադատություն ի վերա թղթոյն Մ. Խորենացվո առ Սահակ Արծրունի և պատկերի Տիրամորն ի հոգյաց վանս, «Բազմավեպ», 1887, № 4—6, էջ 97—116:

<sup>3</sup> Տե՛ս նաև Մովսէս Խորենացուն ուղղված Սահակ Արծրունու թղթի հետևյալ հրատարակությունը՝ «Թուղթ Սահակայ Արծրունեաց իշխանի առ երանելի վարդապետն Մովսէս Խորենացի» («Բազմավեպ», 1886, № 1, էջ 5):



գրութիւնք: Ի Վենետիկ: Ի տպարանի Սրբոյն Ղազարոս Յանի 1867  
Քատորում:  
Էջ 288—296:

39. [Սրբոյ Քորն մերոյ Մովսէսի Խորենացոյ].

Պատասխան թղթոյն Սահակայ Արծրունոյ. յորում եւ բանք մա-  
գարեալանք. եւ պատմութիւն վասն սուրբ պատկերին Տիրամօրն ի  
Մովսէսի Խորենացոյ արտայայտեալ:  
Լույս է տեսել՝ «Լուսն», ամսագիր, 1900, Գիրք Ա, էջ 802—806:  
Հրատարակիչ՝ Գլուս Աղանյանց:

**ՅԱՐԱԿԱՆՆԵՐ, ՏԱՂԵՐ, ԵՐԳԵՐ, ԵՎԱԳՆԵՐ**

40. Սուրբ Մովսէս Քերթոյ՝ զմրագալուցի Ուրախացիին, զՎարդ Մնղն-  
դեանն և զԱնթատամն. զՏեառնընթատաջին, զՃարութեան հարցան,  
և զԱռաջին պատկերսն Հոգոյ զպստեանն. զՎարդավաթի և զՎերա-  
փոխման. և զՄեծացուցեքն.

Իսկ՝ Սուրբ Անտոնին, զԹագաւորացն, զԱւարելոցն, զՅօհաննէսն,  
զՍրբոյն Գրիգորին, զՄարգարէիցն և զՎարդանանցն, զպստեանսն  
ոմանք Անանիայի տան, և ոմանք Խորենացոյն՝:

Տե՛ս «Ծարակնոց: Երածչտական երգեցմունք հոգևորականք. սու-  
տուածայնոց և երջանկաց սրբոց վարդապետաց Հայոց բարգմանչաց:  
զՎարդաւորութիւնս եկեղեցոյ վայելչացուցանողաց»:

Ամստերդամ. 1864—1865<sup>2</sup>:

41. Մեղեդի Սուրբ Լուսավորչին. Մովսէս Քերթոյին ոգեալ:

Տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1849, № 4, էջ 58<sup>3</sup>:

42. Մովսէս Խորենացի, Ծարականք:

ա. Խորհուրդ մեծ և սքանչելի...

<sup>1</sup> Մովսէս Խորենացուն վերագրվող շարականների մասին բաներն  
տես՝ Ն. Թահմիզյան, Մովսէս Խորենացին և հայ հին ու փոքր միջնադար-  
յան երգարվեստը, «Էջմիածին», ամսագիր, 1979, № 6, էջ 25—32, № 7,  
էջ 44—58: Կ. Հակոբյան, Ծարականների ժանրը հայ միջնադարյան  
գրականության մեջ, Երևան, 1980: Այստեղ (հավելված 1) տես նաև  
Խորենացուց բերված երկու շարականների բնագրերը:

<sup>2</sup> Տե՛ս նաև Ամստերդամ, 1885, 1692, 1702—1708, 1712, 1718: Կ. Պո-  
լիս, 1710—1711, 1730, 1768, 1790, 1802, 1815, 1828, 1858: Էջմիածին,  
1789, Երուսաղեմ, 1936 և այլն:

<sup>3</sup> Հմմտ. «Գիրք ժողովածոյ ընդէմ երկարնակաց», Նոր Ջուղա, 1888,  
էջ 268—269, ինչպես նաև Գ. Մովսէսյանց, Հնոց և Նորոց. Պատմութիւն  
վասն Դատի եւ Մովսէսի Խորենացոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 88 (աւելան  
իբրև Գլուս կաթողիկոսին ձոնված) և այլն:

բ. Այսօր յարեալ ի մեռելոց փեսայն անմահ...

գ. Այսօր տո՞՞ւ է ծնընդեան, անտիս...

Տե՛ս «Քնար Հայկականք», ժողովածու, խմբագրեց Մ. Մ. Մրան-  
արյանց, Ս. Պետերբուրգ, 1868:

Էջ 88—98:

43. Մովսէս Խորենացի, Ծարականք:

Տե՛ս «Ջայնագրեալ շարական հոգևոր երգոց», Վաղարշապատ,  
1875:

Էջ 58—65, 86—112, 118—119, 120—124, 125—129, 462—465,  
669—667, 789—748 (ըստ Ն. Թահմիզյանի):

44. Моисей Хоренский, Шараканы.

Канон на Усекновение главы Иоанна Предтечи.

Ему же приписывают каноны: на Богоявление, на Сретение  
Господне, св. Пророкам, св. Отцам (трех первых вселенских  
соборов).

Приписываются св. Моисею Хоренскому и католикосу Ион-  
ну Мандакуни каноны: царю Феодосию, всем апостолам, на пер-  
вый день Пятдесятницы, второй канон св. Григорию Просвети-  
телю.

Приписываются св. Моисею Хоренскому, Нерсесу Благодат-  
ному и католикосу Ионну Мандакуни канон: св. Антонию Пус-  
тынику.

Տե՛ս «Шаракан. Богослужебные каноны и песни Армянской  
Восточной церкви», перевел с древнеармянского языка Н. Эмин.  
Москва, 1879.

45. Մեղեդի Սուրբ Լուսավորչին: Մովսէս Քերթոյին ոգեալ: (Տաղ մեծ):

Տե՛ս «Արարատ», Վաղարշապատ, 1895, № 6, էջ 202—208:

Հրատարակիչ՝ Ն. Քարամյան (ստորագր.՝ Ն. Ք.):

46. Моисей Хоренский, Шараканы.

Տե՛ս «Шаракан. Богослужебные каноны и песни Армянской  
Восточной церкви», перевел с древнеармянского языка Н. Эмин.

2-ое издание, под редакцией К. Костанянца.

Москва. 1914.

47. Моисей Хоренский, Шаракан.

Возседаешь на престол.

Перевел Н. Реулло.

Տե՛ս «Армянский вестник», еженедельный журнал, Москва.  
1916. № 27, էջ 20.

48. Մովսէս Խորենացի, Ծարականք:

ա. Խորհուրդ մեծ և սքանչելի...

բ. Մին լուսոյ և անպիտանի, սուրբ կոյմ...







**ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԱՅՈՑ»-Ի ԵՐԿԱՍԻՐՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱՊՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ**

Մովսես Խորենացու «Լայոց պատմություն» հրատարակության ու թարգմանության հետ են աղերսվում հայ և օտար բազմաթիվ նշանավոր հայագետներ: Խորենացու երկերի մատենագիտությունը կազմելուց հետո անհրաժեշտություն զգացվեց անդրադառնալ բոլոր նրանց, ովքեր գրադվել են Պատմության հրատարակման և թարգմանության աշխատանքներով: Այսինքն՝ անհրաժեշտ համարեցինք ի մի հավաքել ու դասակարգել հայ և եվրոպացի բոլոր այն հայագետների կենսագրականները, ովքեր անմիջականորեն զբաղվել են Խորենացու Պատմության հրատարակությամբ և թարգմանությամբ: Դրա անհրաժեշտությունը զգալի է: Խոստովանելի է, որ մեզանում գոյություն ունեցող կենսագրական բառարաններն ու հանրագիտարանները թերի են, եղած կենսագրականները երբեմն խիստ սխեմատիկ: Նրանցում, ի դեպ, տեղ չեն գտել, ի շարք շատ անվանի հայագետների, ճան Խորենացու Պատմության երկասիրողներ Սարգիս Սարաֆյանի, Հովսեփ Հովհաննիսյանի, Ջ. Կապպելեյտիի, Մ. Լաուերի, Խորեն Ստեփանյանի, Սեթ Հարությունյանի կենսագրականները: Ուստի այդ բացը մասամբ լրացնելու մտահոգությամբ է, որ կազմել ենք սույն կենսագրական բառարանը:

Բառարանում ժամանակագրական հաջորդականությամբ տրված են հայ և օտար քսան երկասիրողների համառոտ կենսագրությունները: Լինելով տարբեր դարաշրջանների, տարբեր ազգությունների ու տարբեր նախասիրությունների տեր հեղինակներ՝ նրանց բոլորին միավորել և մի տեղ է հավաքել մի ընդհանուր ելակետ՝ Խորենացու Լայոց պատմությունը, որի հետ նրանք կապված են իրենց ընդհանուր գիտական հետաքրքրություններով ու ակնածանքով:

Ինչ խոսք, Խորենացու Պատմության երկասիրողների դիմապատկերների սույն համառոտ բառարանը որոշ պատկերացում կտա նաև խորենացիագիտության անցած 300-ամյա ուղու և ձեռք բերած արդյունքների մասին: Այն անշուշտ, ցուցահանում է նաև քսան երկասիրողներից յուրաքանչյուրի ներդրած վաստակը ընդհանրապես հայագիտության և մասնավորապես Պատմաճոր անմահ երկի գիտական ուսումնասիրության, տարածման ու պրոպագանդան բնագավառներում:

Կարծում ենք, որ սույն բառարանը կնպաստի նաև խորենացիագիտության ամբողջական ու գիտական պատմության ստեղծման գործին:

Ծնվել է Նախիջևանի Գողթն գավառի Վանանդ գյուղում: Սովորել է ծննդավայրի վարժարանում: Իրեն նվիրել է հոգևոր գործունեության, հեղինակել է չափածո երկեր: 1670-ին մեկնել է Եվրոպա. առժամանակ գործել է Կիպրոսում, Հռոմում և այլուր: 1678-ին վերադառնալով հայրենիք՝ նշանակվել է Գողթնի ս. Խաչ վանքի հոգևոր առաջնորդ, օծվել եպիսկոպոս: 1679-ին, իր հետ առնելով Դուկաս և Միքայել եղբորորդիներին, դարձյալ մեկնում է Եվրոպա՝ տպագրական գործը զարգացնելու նպատակով: Լինում է Մարսելում, Հռոմում, Լիսաբոնում, Բրյուսելում, ի վերջո՝ 1694-ին հաստատվում է Ամստերդամում: Այստեղ Մատթեոս Հովհաննիսյան Վանանդեցու աջակցությամբ տպարան է հիմնադրում և տպագրում մի քանի արժեքավոր գործեր՝ «Համատարած աշխարհացոյց» (1695), Թոմա Գեմբացու «Յաղագս համահետեմանն Քրիստոսի» (1696), «Աստուածաշունչ Նոր կտակարան» (1698—1700), Դուկաս Վանանդեցու «Գանն չափոյ, կշոյ, թվոյ, եւ դրամից բոլոր աշխարհի» (1699), «Ժապկանց» (1702—1703), «Ժամգիրք» (1705) և այլն:

1695 թվականին, Թովմաս Վանանդեցու ծախսով և աշխատասիրությամբ լույս է տեսնում Մովսես Խորենացու Պատմությունը: Դիմելով «համայն ընթերցողս» աշխատասիրողը նշում է. «Ես անպիտան և ունայն և թափուր լայնեցի լաւաց և օգտակարաց Թոմաս ծառայ ծառայից Աստուծոյ ի վայելուչ քաղաքէ Վանանդոյ Գողթնեաց, ձեռնամուխ եղեալ տպեցի զՉքնադավէպ՝ և զԳեղեցկաշատ Պատմութիւնս, Նախնեաց մերոց, և Հայկազունեաց Տոհմի համեղ՝ և ախորժայուր ոճիս»: Այս տպագրության շրջանորհիվ է, որ Խորենացու Պատմությունը տարածվում է հայ իրականության մեջ, հայտնի դառնում Եվրոպայի գիտական շրջանակներին, հիմք դառնում այլալեզու թարգմանությունների համար: Սրանով սկիզբ է դրվում խորենացիագիտությանը: Մինևն այն ժամանակ, այս տպագրությամբ Թովմաս Նուրիջանյանը դառնում է հայտնի և խիստ հարգված անուն, վայելում մեծ հեղինակություն: Այդ ժամանակ է, որ Թոմաս աշակերտում է նշանավոր Յոսիպ Ծրյոդեքը, որն իր «Արամեան լեզուի գանձ» (1711) գրքի առաջաբանում բազում գովեստից խոսքեր է ասել իր ուսուցչի հիշատակին: Անձնական սերտ կապերի մեջ է տեղ նաև նշանավոր փիլիսոփա Գ. Վ. Լայննիցի, հավանաբար Իսրայել Օրու և այլոց հետ:

1707 թ. մայիսի 29-ին, Օքսֆորդում եղած ժամանակ, նրան շնորհվել է «դոկտոր Աստուածաբանութեան» պատվատիտղոսը:

Կյանքի վերջին շրջանում Թովմաս Նուրիջանյանը հետամուտ էր տղայարանն ու տպագրած գրքերը հայրենիք փոխադրելու, այնտեղ տպագրության գործը կազմակերպելու և դպրոց հիմնադրելու գաղափարին: Սակայն ծանր հիվանդությունն ու մահը Անտվերպենում (8 սեպտեմբերի, 1708 թ.) ի չիք են դարձնում նրա այդ ազնիվ մտադրությունը:

Թովմաս Նուրիջանյանի մարմինն ամփոփված է Անտվերպենի Նուր Դամ մայր եկեղեցու ավագ խորանում:



դար), երկրորդ տպագրություն, Քրիստի, 1904, էջ 415—449: Ա. Մարտիան, Հայկանդան և հայերը ժԶ—ԺԹ դարերում, Վիեննա, 1926: Մ. Գ. Գրիգորյան, Նոր հայերի և դիտողություններ հրատարակիչ վաճառքի վրա, Վիեննա, 1969:

### ՀԵՆՐԻԿՈՍ ՅԱԿՈԲՈՍ ԲԵՆՆԵՐ (1669—1722)

Հ. Բեննեռը ծնվել է 1669 թ. սեպտեմբերի 18-ին Ծվեդիայի Քրոնրու բնակավայրում, քահանայի ընդամիջում: Սովորել է Արո քաղաքի գիմնազիայում (1688—1687): Ավարտել է Լուդի (1687) և Ուպսալայի (1690) համալսարանները: Ուպսալայի համալսարանում նրան շնորհվել է Արվեստից մագիստրոսի տիտղոս: 1697-ին, Կարլոս XI-ի կարգադրությամբ, Պարսկաստան է ուղեկցել շվեդական պատվիրակ Լյուդվիգ Ֆարրիցիոսին: Սպահանում եղած ժամանակ հետաքրքրվել է հայերի մասին, տեղեկություններ հավաքել նրանց պատմության վերաբերյալ: Հայերեն է սովորել դոմինիկյան միաբանության վանական Յոհաննես Բարթոլոմեոսի մոտ: Հենց վերջինս էլ Բեննեռին նվիրում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մի համառոտված հայերեն ձեռագիր օրինակ, որն ինքն էր արտատրել Հոռմում: 1699-ին, Ծվեդիա վերադարձի ժամանակ, Բեննեռը լինում է նաև Հայաստանում և հայաբնակ վայրերում, ծանոթանում հայ ժողովրդի պատմական անցյալին, հուշարձաններին, խորացնում իմացությունը հայոց լեզվից: 1700 թվականին, երբ Բեննեռն արդեն Ռուսաստանում էր, բռնկվում է ռուս-շվեդական պատերազմը: Որպես շվեդական քաղաքացի նա ձերբակալվում է ռուսական իշխանությունների կողմից և արգելափակվում: Բեննեռը բանտարկված մնաց ավելի քան 20 տարի (Կազան, Մոսկվա) և միայն Նիշտադյան հաշտության պայմանագրի կընթացումից հետո (1721) հնարավորություն ունեցավ վերադառնալու հայրենիք: Այստեղ վարել է զանազան պաշտոններ՝ նշանակվել է հնությունների արխիվի խորհրդական, թագավորական գրադարանի տնօրեն (1723-ից), արժանացել պրոֆեսորի կոչման, դասավանդել Ստոկհոլմի ուսումնական հաստատություններում:

Հ. Բեննեռը հեղինակ է դեպի Պարսկաստան Պետրոս Մեծի կատարած արշավանքի նկարագրության (1725), հեղինակակից Կասպից ծովի ափերի վերաբերյալ մի քանի քարտեզների: Հ. Բեննեռին, որպես արևելագետի, անշուշտ, բնորոշում է նախևառաջ Մովսես Խորենացու Պատմության՝ նրա կատարած լատիներեն թարգմանությունը: Հ. Բեննեռը թարգմանությանը ձեռնամուխ եղավ ու ավարտեց բանտարկության տարիներին (1700—1721): Թարգմանությունը լույս տեսավ 1723-ին՝ Ստոկհոլմում: Սա, ըստ էության, ոչ թե ամբողջական, այլ Խորենացու Պատմության երեք գրքերի համառոտված թարգմանություն է, համեմատված առաջաբանով և հարուստ ծանոթագրություններով: Վերջիններս վկայում են աշխատասիրողի հմտությունը և քաջատեղյակությունը հին հայկական ասական գրականությանը:

Հ. Բեննեռը մահացել է 1728 թ. օգոստոսի 29-ին, Ստոկհոլմում:

Փրակամություն. «Svensk biografisk lexikon», t. 6, Stockholm, 1926, 214—217 p.

### ԳԵՎՈՐԳ ԵՎ ԳՈՒՎԻԵԼՄՈՒՍ ՎԻՍՏՈՆ ԵՂԱՅԹՐԵՐ

Վիստոն եղբայրները վիթխարի դեր են խաղացել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ը եվրոպական բանասիրական ու պատմագիտական մտքի հետ ծանոթացնելու գործում: Նրանց լատիներեն թարգմանությունը հիմք հանդիսացավ հայագիտության համակարգի նոր, անմխաբն զարգացմանը:

Ծավոք, մենք շատ քիչ գիտենք Վիստոնների մասին: Հայտնի է, որ նրանց հայրը՝ Գուլիելմոս Վիստոնը 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարի սկզբներին բնակվում էր Հնդկաստանում: Ծնունդ էլ է մեծահարուստ Գրիգոր Աղափիրյանի մոտ և եղել նրա զավակների ուսուցիչը Մադրաս քաղաքում: 18-րդ դարի 10-ական թվականներին վերադարձել է Անգլիա: Գևորգ և Գուլիելմոս որդիներն առաջին անգամ նրանից են իմացել հայերի մասին, նրանից են սովորել հայերեն: Հետագայում եղբայրներն իրենց հայերենը խորացրին և կատարելագործեցին Դուկաս Նորիջանյանի հակոբոսյան գերբը և լատիներեն թարգմանելու համար: Թարգմանության առաջին փորձերը կատարեցին դեռևս 20-ական թվականների վերջերին և թարգմանության առանձին մասեր ուղարկեցին ֆրանսիացի հայագետ Մ. Վ. լա Կրոզին՝ կարծիքի: Վերջինս մեծ հեղինակություն էր, քաջամուտ հայ գրականության և եղբայրները հույս ունեին խրախույս գտնելու նրա մոտ: Սակայն լա Կրոզը չի ուղշունում նրանց այդ որոշումը և հանության մի վերաբերում «Մովսիսի առասպելաց ի լատին թարգմանութեան»-ը: Միաժամանակ լա Կրոզը կարծիք է հայտնում, թե Հայոց պատմության շարադրողը պետք է ապրած լիներ 9—10-րդ դարերում՝ Բագրատունիների օրոք և, որ նա զինվորական է եղել: Չնայած լա Կրոզի քաջասական, սուբյեկտիվ հայեցակետին՝ Վիստոնները շարունակում են խոր պատկանաք տածել Հայոց Պատմաճոր նկատմամբ և վճռապես շեշտում են, թե նա «Հինգերորդ դարու մեջ ապրած է և չկա պատճառ մը հետագա դարուց մեջ զինք դնելու»: Ամբողջ Պատմության թարգմանությունն ավարտվել է 1735-ին, որը հավաստվում է նույն թվի հուլիսի 13-ին լա Կրոզին ուղղված Գևորգ Վիստոնի նամակով, իսկ տպագրությունն իրականացվել է 1736 թ. մայիսին: Թարգմանության ընդարձակ առաջաբանում երկասիրողները բարձր են գնահատել Պատմաճոր անձն ու նրա գործը և շեշտել, որ Խորենացին «Բավական հմտություն ունեցող մատենագիր մը է, դյուրահավատ, քան ընկառնող...»

Ով որ կկարծե, թե այս Պատմության գրքն օգուտ մը քաղելը կարելի չէ, զայնպիսին բոլորովին անգրագետ մեկը կհամարենք, ուստի և հույսերնիս մեծ է, թե արդարադատ և հմուտ ընթերցողք մեր այս ձեռնարկը պիտի չարհամարհեն, որ այսպիսի ամենահին լեզվով շարադրված երկասիրություն մը ի խավարն ազատելով ի յույս կընծայենք» (Գ. Օրոմպի, 69

Աջլ. աշխ., էջ 71): Այս թարգմանությամբ է, որ Խորենացին դուրս է գալիս ազգային նեղ անձուկ շրջանակներից և մտնում նոր ուղեծիր, ձեռք բերում համամարդկային հնչելություն, դառնում համաշխարհային քաղաքակրթության արժեքներից ու նվաճումներից մեկը:

**Գ. Կականություն. Գ. Ա. Օրումպֆ, Ռուսումնասիրությունը հայ լեզվի և մատենագրության Արևմուտս (ԺԳ—ԺԺ դար), էջ 69—78:**

**ՍԱՐԳԻՍ ՍԱՐԱՆՑԾԱՆ (ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԵՑԻ, ԱՂԵՔՍԱՆԳՐԾԱՆ,  
ԲՅՈՒՋԱՆԿՐԾԱՆ, ԿԵՍԱՐԾԱՆ՝ 1699—1778)**

Ծնվել է Ադրիանապոլսում 1699 թ. փետրվարին, ակնցի լուծայափոխ Աղեքսանդր Սարաֆյանի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Կ. Պոլսում: Եղել է ոսկերչի աշակերտ, սակայն բուռն սերը գրի և գրքի, եկեղեցու նկատմամբ նրան տարել է վաճառ: Աշակերտել է Կ. Պոլսի Հովհաննես Կոլոտ պատրիարքին (1719-ից): 1726-ին ձեռնադրվել է քահանա, մեկ տարի անց՝ վարդապետ: 1784-ին Էջմիածնում օծվել է եպիսկոպոս: Եղել է նշանավոր քարոզիչ Պոլսում և շրջակայքում, Հայոց առաջնորդ Կեսարիայի (1731—1738) և Գաղատիայի (1788—1741), Երուսաղեմի նվիրակ: 40-ական թվականների սկզբներին հրաժարվել է հայ Առաքելական եկեղեցու դավանանքից և ընդունել կաթոլիկություն: 1745-ին մայիսից որպես կաթոլիկ քարոզիչ գործել է Հռոմում, Վենետիկում, Լիվոռնոյում և Ջյուրդիայում: 1754 թ. դեկտեմբերին դարձյալ հաստատվում է Կ. Պոլսում, որ և այլուր զբաղվել է քարոզչությամբ (մինչև 1772-ը): 1747-ին Վենետիկում հիմնադրել է Հայկական տպարան և մինչև 1752-ը այստեղ տպագրել է 15 անուն գիրք՝ «Նոր Կտակարան» (1751), «Պատմություն վարուց Յօհաննու Ոսկերեքանի» (1751) և այլն: 1752-ի մայիսին իտալահայ մեծահարուստ Հովհաննես չելեպի Սեդրոյանի (Մարքեզե Միովաննի դի Սերբոս, 1727—1811) նվիրատվությամբ տպագրել է Մովսես Խորենացու Պատմությունը և Աշխարհագրությունը: Տպագրությունը կատարվել է Ամստերդամի հրատարակության հիման վրա՝ «Եւ յաղագս չունելոյ մեք առս զձեռագիր գաղափար, միայն ի Յամստելոյամ տպագրեցելոյն օրինակեցաք» («Առաջաբան»):

Սարգիս Սարաֆյանը մահացել է Լիվոռնոյում, 1778 թ. հոկտեմբերի 2-ին:

**Գրականություն. Գ. Գալեմբարյան, Կենսագրություն Սարգիս Արքեպիսկոպոսի Սարաֆյան և ժամանակին հայ կաթողիկեսայք, Վիեննա, 1908: Ս. Մենենյան, Նոր հյուրեր Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆյանի մասին, տե՛ս «Բազմավեպ», 1938, № 1—4, էջ 162—178, 1934, № 1—2, էջ 118—141: Գ. Բամբուքյան, Հովհաննես պատրիարք Կոլոտ և իր աշակերտները, Մտանալու, 1934:**

**ՀՈՎՍԵԹ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍԾԱՆ  
(ԻՈՍԻՑ ԻՌԱՆՆԵՍՈՎ, ՅԱԺԳԵՐՈՒՆՑԻՒՆ ԾՆ. Բ. ԱՆՏՈ.— 1862)**

Կենսագրական տվյալները խիստ կցկտուր են: Հայտնի է, որ աստ-րախանցի է, եղել է սարկավագ, պաշտոնավարել է Պետերբուրգի հայկական Ս. Կատարինե մայր եկեղեցում: 1811-ի սեպտեմբերին Հովսեփ Հովհաննիսյանը Պետերբուրգում հիմնադրել է հայկական երկրորդ տպարանը Ռուսաստանում: Այն տեղավորված էր Նևայի պողոտայի վրա գտնվող Լազարյանների պատկանող շենքերից մեկի երկրորդ հարկում: Տպարանը գործել է մինչև 1827 թվականը: Տպագրել է շուրջ 12 անուն գիրք՝ ձեռ մասամբ հրիտանական աստվածաշնչային ընկերության գրքերը՝ «Նոր կտակարան» (1814, 1817), «Աստուածաշունչ» (1817) և այլն: Հովսեփ Հովհաննիսյանի տպագրած «Աստուածաշունչը» համարվում է նշանակալից երևույթ հայ տպագրական կյանքում:

Զբաղվել է թարգմանական աշխատանքներով, ուսերեն է թարգմանել Գևորգ (Եգոր) Խուրովի «1778—1809 թթ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը» (հայերեն բնագիրը անհայտ է, 1811), Մարգար Խոճենցի (Գեղամբյան) «Բարաբանական դիմատնություն հարույական» (1812) աշխատությունները, թարգմանել և գրաբար-ուսերեն համատեղ տեքստով հրատարակել է Գրիգոր Նարեկացու «Մաղթանք գիշերայինը» (1810): Ռուսերենից գրաբար է թարգմանել Մոսկվայի մետրոպոլիտ Պլատոնի «Քարոզներ» (1811), «Բան առ Հայկազնայ քրիստոնեայս, ընկերակցութե՛ն՝ ուսաց Աստուածաշունչ ժողովոյն, որ ի Ռուսաստան» (1816) գրքերը: Հովսեփ Հովհաննիսյանի գործունեության պատկը կազմում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» նրա կատարած ուսուերեն թարգմանությունը (1809), որը ձոնված է ուսաց Ալեքսանդր I-ին կայսրին: Հովսեփ Հովհաննիսյանի սույն թարգմանության ընդհանրիվ է, որ ուս ընթերցողն ու գիտական հասարակամությունը, առաջին անգամ լայն ընդգրկմամբ, ծանոթացան Մովսես Խորենացու Պատմության հետ: Ըստ էության, այս թարգմանությունը հոր, լայն հորիզոններ բացեց Ռուսաստանում հայագիտական մտքի զարգացման համար: Մահացել է 1862-ին՝ Ս. Պետերբուրգում:

**ԱՐՍԵՆ ԿՈՄԻՏՍԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ  
(ԱՆԹԻՄՈՍՅԱՆ, ԱՌԱՆ ՍԻՍԱԿՅԱՆ՝ 1790—1866)**

Նշանավոր հայագետը ծնվել է Կ. Պոլսում: Նախնական կրթությունը ստացել է տեղի վարժարաններից մեկում: 1801 թ. ընդունվել է Վենետիկի Մխիթարյան դպրոցը, որն ավարտելուց հետո (1810) նշանակվել է ուսուցիչ Ռաֆայելյան վարժարանում, ապա՝ տեսուչ Ս. Ղազարի Մխիթարյան դպրոցում: Եղել է միաբանության գործակալության օգնականը Հռոմում: Գրական առաջին փորձերը կատարել է 1812-ին, գրել է կրոնաբարոյախոսական բնույթի քանաստեղծություններ, հին հունարենից, լատիններից, իտալերենից և ֆրանսերենից կատարել թարգմանություններ:





Արի դպրոցում (1821—1828): Այստեղ աշակերտել է ակաճափոր լեզվաբան Շահան Ջրաբեկին, որի հսկողության ներքո էլ սովորել է հայերեն, հին հայկական բնագրերից կատարել թարգմանություններ: 1828-ից հայր լեզու և գրականություն է դասավանդել Արևելյան կենդանի լեզուների դպրոցում, 1830-ից գլխավորել է նույն դպրոցի հայագիտական ամբիոնը: 1834-ին մեկնել է Վեներտիկ և խորացել հայոց լեզվի ուսումնասիրության մեջ, Մխիթարյանների աջակցությամբ կատարել է իր առաջին հայագիտական հետազոտությունները, ձեռնամուխ եղել Մովսես Խորենացու Հայոց պատմության ֆրանսերեն թարգմանությանը: Թարգմանությունը լույս տեսավ Փարիզում, 1836-ին և շատ լայն արձագանք չունեցավ, կարելի է ասել այն չընդունվեց գիտական հասարակականության կողմից: Մույն հասկացած թարգմանությունն այնքան պակասավոր էր ու թերի, որ թարգմանիչը «բռնադատվեցավ անհետ ընել զայն՝ վերցնելով ի վաճառման» (տե՛ս Գ. Ա. Շրումպֆ, նշվ. աշխ., էջ 180):

1837—1840 թվականներին դը Ֆյորիվալը ամբողջությամբ զբաղված էր Խորենացու Պատմության նոր թարգմանության աշխատանքներով: Սա միանգամայն նոր, ընտրելագույն թարգմանություն էր, որը կատարվել էր բազմահմուտ գրաքարագետ Գաբրիել Այվազովսկու խիստ հսկողության ներքո: Ի վերջո աշխատանքը պսակվում է մի հաջողված հրատարակությամբ: Խորենացու Պատմության ֆրանսերեն նոր թարգմանությունը լույս տեսավ 1841-ին երկու գրքով՝ հայերեն բնագրով ու հարուստ ծանոթագրություններով: Այն վերահրատարակվել է նաև 1845-ին: Նշելի է, որ դը Ֆյորիվալն իր թարգմանությունը ձոնել է Ռուսաց Նիկոլայ I-ին կայսրին, որն ի նշան շնորհակալության, թարգմանչին նվիրել է ադամանդակալու մատանի:

Դը Ֆյորիվալը շատ բարձր է գնահատել Խորենացուն, համարելով նրան «հարեկան և սիրող ճշմարտության», որը «կրճա երբեմն խաբված ըլլալ, բայց ոչ երբեք խաբող»: Նա ֆրանսերեն է թարգմանել նաև Մարգար Խոճենցի «հատարնական դիմառնություն բարոյական» երկը (1832), Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» (1848) և Մխիթար Գոշի Առակները (չի հրատարակվել):

Գրականություն Գ. Ա. Շրումպֆ, Ռուսումնասիրությունը հայ լեզվի և մատենագրության Արևմուտս (ԺԴ—ԺԹ դար), էջ 129—186:

### ՆԻԿՈՂ ԹՈՄՄԱՋԵՆ (ՏՈՄՍՈՒԻ, 1802—1874)

Ծնվել է Գայմատիսի Օեպենիկ քաղաքում, 1802 թ. հոկտեմբերի 9-ին: 1818-ին ընդունվել է Պատուայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ավարտել այն 1823-ին: Զբաղվել է գրական աշխատանքներով, աշխատակցել է ֆրանսիական, իտալական գիտական պարբերականներին: 1848-ին նշանակվել է Վեներտիկի դեսպան Ֆրանսիայում, կարևոր դեր է խաղացել իտալական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում: Եղել է Վեներտիկի պառլամենտի դեսպուտատ: Հեղինակ է

բազմաթիվ բանաստեղծական ժողովածուների, վեպերի, գրականագիտական-բանասիրական երկասիրությունների, կազմել է բառարաններ, կատարել թարգմանություններ: Հայերեն սովորել է Վեներտիկի Մխիթարյանների մոտ, նրա ուսուցիչն է եղել Գաբրիել վարդապետ Այվազովսկին: Վերջինիս խորհրդով ու օգնությամբ իտալերեն է թարգմանել Մովսես Խորենացու Հայոց պատմությունը (1841, վերահրատարակվել է 1850-ին), Ագաթանգեղոսի «Պատմություն»-ը (1848): Զույգ հրատարակություններն էլ օժտել է պատմաբանադատական հմտալից առաջաբաններով: Ագաթանգեղոսի թարգմանության «Ազդ»-ում շեշտել է հայ հին գրականության դերը ու նշանակությունը համաշխարհային գրականության համակարգում: «Իցի՛ր Հայաստանի հին յիշատակներու այս իտալական թարգմանութիւնը՝ հաստատ է սիրոյ նոր գօղ և կցորդութիւն՝ իրարմէ հետի, այլ հաւատքով և վիճակաւ համանման երկու քոյրերու մէջ» («հազմավեպ», 1902, էջ 523): Ն. Թոմմազեոն մահացել է 1874 թ. մայիսի 1-ին, Ֆլորենցիայում:

Գրականություն. Գր. Մելալ, Նիկոլո Թոմմազեո, տե՛ս «հազմավեպ», 1902, № 11, էջ 520—528:

### ԶՈՒՋԵՊԵ ԿԱՊՊԵԼԵՏԻ (1810—1876)

Ծնվել է Վեներտիկում: Սովորել է տեղի հոգևոր վարժարանում, որն ավարտելուց հետո ձեռնարկվել է քահանա: Պաշտոնավարել է Ասի Մենովայի ս. Բարդուղիմեոս եկեղեցում, ապա Վեներտիկում: Դեռևս ուսումնառության տարիներին հետաքրքրվել է հայոց լեզվով և ուսումնասիրել այն Մանվել Զախչախյանի «Հայ-իտալերեն» բառարանի օգնությամբ: Լատիներեն է թարգմանել և հրատարակել Ներսես Օճորհալու «Թողոք ընդհանրականը» (1829): Հաջողված թարգմանության շերտ ընդունելությունից ոգևորված՝ ձեռնամուխ է լինում Օճորհալու մյուս արձակ թղթերի թարգմանությանը, որը պսակվում է Պիոս IX պապին ձեռնած երկհատոր մի շքեղ հրատարակությամբ (1833): Զ. Կապպելետին հեղինակել է «Հայաստան» եռհատոր իտալերեն աշխատությանը (1841—1842), որը, ըստ ամենայնի, Ղ. Ինճիճյանի «Հնամասություն Հայաստանեայց»-ի համատարտությունն է: Մույն աշխատությունը կարևոր դեր է խաղացել Արևմուտքում, մասնավորապես Իտալիայում, Հայաստանի և հայ ժողովրդի պատմության մասին ճշգրիտ պատկերացում կազմելու գործում: Հեղինակն, ի դեպ, սույն գրքի առաջին էջի վրա իրեն անվանում է «Մխիթարյան հայկական ճեմարանի անդամ»: Զ. Կապպելետին հեղինակ է նաև Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության պատմությանը նվիրված ծավալուն մեմոարային (1877) և բազմաթիվ հայագիտական հոդվածների, որոնք տպագրվել են իտալական բանասիրական քննյոթի ամենատարբեր հանդեսներում: Անշուշտ, Կապպելետին առավել նշանավոր է Եղիշեի (1840) և Մովսես Խորենացու (1841) Պատմությունների իտալերեն թարգմանություններով:

Գրականություն. Գ. Ա. Շրումպֆ, Ռուսումնասիրությունը հայ լեզվի և մատենագրության Արևմուտս (ԺԴ—ԺԹ դար), էջ 862—865:











սերն (Փարիզ, 1888)։ Մ. Լատերց աճաճար ճեսեկ է թարգմանությանը և գրագրել ամբողջ գործը։ Գերմաներեն է թարգմանել Մովսես Խորենացու (Թեգեանուրց, 1869) և Փաղատու Բյուզանդի (Քյոլն, 1879) Հայոց պատմությունները։

**ԽՈՐԵՆ ԱՏԵՓՈՒՆ (ԱՏԵՓՈՒՆՈ ԱՏԵՓՈՒՆՅԱՆ, ԱՏԵՓՈՒՆՈ ԱՏԵՓՈՒՆ, ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԻՅՈՒՆ՝ 1840—1900)**

Ծնվել է 1840-ից Թիֆլիսում։ Սովորել է ճգնագագարի Դերսիպան դպրոցում և Մալբալայի Լազարյան ճեմարանում։ 1858-ից ընդունվել և 1862-ին ավարտել է Մալբալայի ճանաչարանի իրազարմանան ֆակուլտետը։ 1862—1868 թթ. ուսուցչությանը է գրավել Թիֆլիսի սուսեյն դասական գիմնազիայում և այլ դպրոցներում։ Հիմնադրել է մի քանի դպրոցներ։ Աշխատակցել է Փամբակի ճշմարտի հայկական պարբերականների («Հրովառափայլ» և այլն), տպագրել բանաստեղծություններ, կատարել թարգմանություններ։ Հրատարակել և խմբագրել է «Հայկական աշխարհ» (1864—1879) և «Մանկավարժաց» (1884—1887) ճանդեսները։ 1871-ին ձեռնարկել է կուսակրոն բանասան և ճշմարտիկ Երևանի թեմական ծխական դպրոցների տեսուչ, այճաճես և տեսչությունը է արել Օւշիում, Թիֆլիսում, Բարդուզ։ 1874-ից դասավանդել է Գևորգյան ճեմարանում և միաճանճան խմբագրել «Արարատ» ճանդետը (1875-ից)։

1876-ից վարդապետ, 1894-ից եպիսկոպոս։ 1882-ին ճշմանակի է Արազգիսայի և Արաբրայակի սուսեցնորական փոխանորդ, 1887-ից Պետերբուրգի և Մալբալայի Հայոց ճոգետը ճովիլ, իսկ այճաճեսուճ Դրինի ս. Խաչ վանքի վանանար, 1895-ին Աստրախանի թեմի սուսեցնորական փոխանորդ և դարճյալ Դրինի ս. Խաչ վանքի վանանար (1896-ից)։

Ի. Ստեփաննց Մովսես Խորենացու «Հայոց պատմության» թարգմանությանը ձեռնամուկ է եղել դեռես 60-ական թվականներին և որոչ ճատվածնէ տպագրել «Հայկական աշխարհ» ամսագրում։ Այճ ամբողջությամբ տպագրվեց Հովնաննես Հովնանյանի ստատաննոն նվիրատվությանը՝ 1889 թվականին։ Թարգմանիչը «Առասարանում» իտատվանում է «այճ դատն ճշմարտությունը, որը ճախագանց ճավայի իրողություն է, որ մեզյն ճայկական ազգի պատմությանը ճայրը, ամբողջ ուսումնանանց աշխարհից արճանագես ճնանատվելով, ուսումնատիրվելով և թարգմանվելով թատներեն, ֆրանսերեն, ռուսերեն, իտալերեն, գերմաներեն, ճայերեն ամբողջ և ամնոց մնացից մինէլ այմի իրանց ազգային ճանկայից մտասգությունը ճաննելու և ճնանատելու»։ Սույճ թարգմանությունը ճայճ տարանում գտավ և թարգմանից թերեց արճանի ճնանատական։

Խորեն Ստեփաննց մանացել է Թիֆլիսում, 1900 թ. ճոյներին 13-ից։

Փարսիանություն. «Արարատ» ամսագիր, 1900, № 12, էջ 586: «Արարատ», 1901, № 1, էջ 27—28: «Բագրատեպ», 1901, № 1, էջ 84: Մ. Գուսպարյան, Խորեն եպիսկոպոս Ստեփաննցի մանկավարճական գործունեությունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1900, № 5, էջ 26—30: 80



Սկ. 24 Վ. Սոցկոս

թյունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1900, № 5, էջ 26—30: 80

459 — Ը

թյունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1900, № 5, էջ 26—30: 80

459 — Ը

թյունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1900, № 5, էջ 26—30: 80

459 — Ը

թյունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1900, № 5, էջ 26—30: 80

459 — Ը

թյունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1900, № 5, էջ 26—30: 80

459 — Ը

թյունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1900, № 5, էջ 26—30: 80

459 — Ը

թյունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1900, № 5, էջ 26—30: 80

459 — Ը

թյունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1900, № 5, էջ 26—30: 80

459 — Ը

թյունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1900, № 5, էջ 26—30: 80

459 — Ը

թյունը, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1900, № 5, էջ 26—30: 80

459 — Ը

**ԿՐԻՑՈՆՆԻ ՍՈՒՆՈՑ (ՔՐԻՑՈՆՆԻ ՍՈՒՆՈՑՆԵՆ,  
ԽՈՒՆԻԿ ԱՍՏՎԱԾՆՅՐԸՆՆԵՐ 1842—1907)**

Ծնվել է Հունգարիայի Մարոշ-Բոգառ բնակավայրում: Սովորել է Բուդապեշտի համալսարանում: Ուսանողական տարիներից հետաքրքրվել է հայագիտությամբ, թղթակցել է ժամանակի հայկական պարբերականներին, հոգվածներ տպագրել հունգարահայերի անցյալի և ներկա իրավիճակի մասին: Եղել է Գեոլոգ քաղաքի հայկական դպրոցի, ապա գիմնազիայի ուսուցիչ, այնուհետև վերատեսուչ (1863—1898): Հիմնադրել ու խմբագրել է հունգարահայ «Արմենիա» ամսագիրը (1887—1907), որը հսկայական դեր է խաղացել Հունգարիայում Հայոց պատմության և մշակույթի պրոպագանդիստն ու տարածման գործում: Կ. Սոնգոտյանը գործունե մասնակցություն է ունեցել «Հայկական թանգարանային ընկերության» ստեղծմանը, եղել է նրա նախագահը (1905—1907):

Հեղինակ է հունգարահայ գաղթավայրերին նվիրված բազմաթիվ ծափրակչի ուսումնասիրությունների, որոնցից շատերն այսօր էլ պահել են իրենց նշանակությունը: Դրանցից նշելի են երկհատոր «Սամոշույվար (Գեոլոգ) հայաքաղաքի պատմությունը» (1901—1903), «Հունգարահայ գերդաստանների տոհմանունները» (1898), «Հունգարահայ ազգագրություն» (1903) և այլ մեծագրություններ: Հայերեն է թարգմանել հունգարացի գրողների, հատկապես Ծանդոր Պետեֆիի ստեղծագործությունները:

80-ական թվականների վերջերին վերադարձել է Խորենացու «Հայոց պատմության» թարգմանության աշխատանքները, որի ընթացքի մասին մեկերկու թղթակցություն տպագրում է «Արմենիայում»: Թարգմանությունն ավարտվում է 1891-ի սկզբներին և անմիջապես սկսվում է տպագրությունը, որն ավարտվում է 1892-ին: Կ. Սոնգոտյանի սույն թարգմանությունն ունեցել է դրական մեծ արձագանք, որի վկայությունն են տպագրված բազմաթիվ գրախոսականները ժամանակի հունգարական մամուլում:

Կ. Սոնգոտյանը մահացել է 1907 թ. հունվարի 24-ին, Գեոլոգում:

Գրականություն. Ա. Փիհաս, Խաչիկ Սեմկոյան, տե՛ս «Համգես անօրյա», 1907, № 8, էջ 65—78:

**ՄԱՆՈՒԿ ԽՈՒՆՏՈՒՐԻ ԱԲԵՂՁԱՆ (1865—1944)**

Ծնվել է Նախիջևանի Աստապատ գյուղում, երկրագործի ընտանիքում: 1882-ին ավարտել է Գևորգյան ճեմարանի դպրոցական, իսկ 1885-ին՝ լսարանական բաժինները: Ուսուցչությամբ է զբաղվել Գևորգյան ճեմարանում (1885—1887), Շուշվա թեմական (1887—1889) և Թիֆլիսի Հովնանյան օթիորդաց (1889—1893) դպրոցներում: Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով գնացել է Եվրոպա, ուր ուսանել է Եմալի, Լայպցիգի, Բեռլինի և Սորբոնի համալսարաններում (1893—1897): Եմալի համալսարանում ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան (1898): Վերադառնալով հայրենիք՝ հայոց գրականություն է դասավանդել Գևորգ-

յան ճեմարանում (1898—1914), Թիֆլիսի Հովնանյան և Ներսիսյան դըպրոցներում (1914—1919): Հայաստանի համալսարանի հիմնադիր դասախոսներից է: Եղել է համալսարանի պատմագրական ֆակուլտետի ղեկավար (1923—1925), Գիտության և արվեստի ինստիտուտի նախագահ (1925—1930): Ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր կազմի անդամ (1943):

Ստ. Մալխասյանցի, Ստ. Կանայանի և այլոց հետ 1903 թ. հիմնադրել է «Պատմագիրք Հայոց» մատենաշարը: Հրատարակել է (Ս. Հարությունյանի հետ) Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցի» (1913, վերահրատարակվել է՝ Երևան, 1981, Դեկտեմբեր 1981), Կորյունի «Վարք Մաշտոցի» (1941, վերահրատարակվել է՝ 1954, 1962, 1981) քաղաքական բնագրերը, Վ. Մելիք-Օհանջանյանի հետ՝ «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի տարբերակները (հ. 1—2, 1936—1951):

Մ. Արեղյանը հեղինակ է շուրջ 250 անուն մեծաթեք ուսումնասիրությունների, որոնք նվիրված են հայագիտության ամենատարբեր խընդիրներին: Նրա աշխատություններն ամփոփված են երկերի ութհատորակցում (1966—1985):

Մ. Արեղյանի գիտական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն հատկապես Մովսես Խորենացու նվիրված ուսումնասիրությունները: Նշանակալից են «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու պատմության մեջ. Բնագրատություն և ուսվածք» (Վաղարշապատ, 1899, 602 էջ), «Հայ վիպական բանահյուսություն» («Երկեր», հ. Ա, Երևան, 1966, էջ 15—180), «Մովսես Խորենացի» («Երկեր», հ. Գ, Երևան, 1968, էջ 276—321) և այլն:

Մ. Արեղյանը վախճանվել է 1944 թ. սեպտեմբերի 25-ին, Երևանում:

Գրականություն. «Մամուկ Խաչատուրի Արեղյան» (կենսամատենագիտություն), Երևան, 1968: Կ. Մելիք-Օհանջանյան, Մամուկ Արեղյան, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 8, էջ 8—18: Ա. Հարությունյան, Մամուկ Արեղյան. կյանքն ու գործը, Երևան, 1970:

**ՍԵՓ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՆ**

Ծնվել է Նոր Նախիջևանում: Սովորել է ծննդավայրի վարժարանում, ապա Գևորգյան ճեմարանում, ուր աշակերտել է Կարապետ Կոստանյանցին: Ծեմարանն ավարտելուց հետո նշանակվել է Իզդիրի ծխական դըպրոցի ախագ ուսուցիչ: 90-ական թվականների կեսերին Գևորգյան ճեմարանի վարչության կողմից հրավիրվել է որպես գրաքարի ուսուցիչ, որտեղ և աշխատել է մինչև հաստատության փակվելը (1917 թ.): Հետագայում հայոց լեզու և գրականություն է դասավանդել Էջմիածնի դպրոցներում: Աշխատակցել է ժամանակի պարբերականներին, հատկապես «Արարատ» ամսագրին (1896—1907), «Գիսալոր» կենդանունով երգիծական մանրապատմներ և ֆելիետոններ է տպագրել «Նոր դար»-ում: Հեղինակ է «Եղիշեի և Մակաբայեցվոց գրքերի հարաբերության խնդիրը» (1896), «Արաքսեից գրքերի հետքերը Եղիշեի պատմության մեջ» (1897) քա-



Օստրական ուսումնասիրությունների և դատաբանական ու մանկավարժական խնդիրներին նվիրված մի շարք հոդվածների, որոնք լույս են տեսել «Արարատ» հանդեսում:

Ստ. Մալխասյանցի, Մ. Արեղյանի և այլ նշանավոր հայագետների հետ մասնակցել է «Պատմագիրք Հայոց» մատենաշարի գիտական հրատարակության ստեղծմանը: Մ. Արեղյանի հետ կազմել է Խորենացու Պատմության համեմատական քննադիրը: Աշխատանքներն սկսվել են 1901-ին և ավարտվել 1908-ին: Գիրքը տպագրվել է 1911—1913 թթ. ընթացքում: Ինչպես կատարված աշխատանքը, այնպես էլ ժամանակակիցները վկայում են, որ Ս. Հարությունյանը եղել է հմուտ գրաբարագետ և քննադագետ:

### ՄՏԵՓԱՆՈՍ ՄԼՐԳՍԻ ՄԱԼԽԱՍՅԱՆՑ (1857--1947)

Ծնվել է հոկտեմբերի 25-ին, Ախալցխա քաղաքում: Ազգանակամ կրթությունն ստացել է ծննդավայրի Կարապետյան ծխական և ուսական գավառական դպրոցներում: Ծովորել է նաև Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1874—1878): Բարձրագույն կրթությունն ստացել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում (1881—1889): Համալսարանն ավարտելուց հետո գրադվել է մանկավարժական գործունեությանը: Հայոց լեզու և հայ հին գրականություն է դասավանդել ծննդավայրի Կարապետյան և Եղիազարյան, Թիֆլիսի Ներսիսյան, Հովհաննյան և Գայանյան օրիորդաց դպրոցներում: Եղել է Ներսիսյան դպրոցի և Գեվորգյան ճեմարանի տեսուչ, Հայաստանի համալսարանի հիմնադիր դասախոսներից: 1921 թ. ընդհատել է մանկավարժական գործունեությունը և իրեն նվիրել միմիայն գիտական աշխատանքների: 1943 թ. ընդունվել է հանրապետության Գիտությունների ակադեմիայի հիմնադիր կազմում:

Ստ. Մալխասյանը հայագիտական մեծ վաստակ և անուրանալի հեղինակություն ունեցող գիտնական էր: Նրա աշխատասիրությանը են լույս տեսել «Բռնի միություն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցվույց Հոռվմա» ժողովածուն (1884), Ստեփանոս Ասողիկի (1885), Ղևոնդ Կարապետի (1887), Ղազար Փարպեցու (1904), Սեբեոսի (1909) հայերեն և ռուսերեն), Ամիրտովյաթ Ամասիացու (1940) քննադիրը: Նախածնունդ և 1903 թ. հիմնադրել է «Պատմագիրք Հայոց» մատենաշարը: Խմբագրել է սույն մատենաշարով լույս տեսած բոլոր հատորները: Թարգմանել և ընդարձակ ուսումնասիրությանը ու ծանոթագրություններով լույս է ընծայել Մովսես Խորենացու (1940, վերահրատարակվել է՝ 1958, 1961, 1968, 1981) և Փափսոս Բուզանդի (1947, վերահրատարակվել է՝ 1954, 1968, 1987) «Հայոց պատմությունները»: Ռուսերեն է թարգմանել Սիմեոն Երևանցու «Ջամբո» աշխատությունը (1958): Հեղինակ է «Հայերեն բացատրական բարբառ» (հ. 1—4, 1944—1945, երկրորդ տպագրություն՝ Բեյրութ, 1955—1956) կոթողային երկասիրության:

Խորենացագիտության քննազավառում, անկասկած, Ստ. Մալխասյանը անմրցելի է: Ծուրջ 50 մեծ ու փոքր ուսումնասիրություններ է նա նվիրել Պատմագիր խնդրին: Դրանց մեջ կան և՛ ծանրակշիռ ուսումնասիրություն-

ներ և՛ մեծագրություններ և՛ փոքրիկ, սակայն խիստ դիպուկ դիտողություններ:

Նշելի են հատկապես «Սեբեոսի պատմությունը և Մ. Խորենացի» (1899), «Մովսես Խորենացի» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1940, էջ VII—XCIV), «Խորենացու ստեղծվածի շուրջը» (Երևան, 1940) և այլն:

Ստ. Մալխասյանը վախճանվել է 1947 թ. հուլիսի 21-ին, Երևանում:

Գրականություն. Ն. Ալիևյան, Ստեփանոս Մալխասյան, տե՛ս «Հանդես ամսօրյա», 1947, № 11—12, էջ 644—648: «Ստեփան Սարգսի Մալխասյանը» (կենսամատենագիտություն), Երևան, 1962:

### ՌՈՒՑԵՐՑ ՎԻՅԱՄ ԹՈՄՍՈՆ

Ծնվել է 1884 թ. մարտի 24-ին Անգլիայի Չիմ քաղաքում: Սովորել է Քենթրիջի համալսարանում (1952—1957): Համալսարանն ավարտելուց հետո փոխադրվել է Վիեննա, ուր Միխայրայանների դպրոցում հետևել է հայագիտական դասընթացների: Հմտացել է հայերենի իմացության մեջ և կատարել թարգմանություններ: Ուսումնասիրել է հին հայկական թարգմանական հուշարձանները, հատկապես Աթանասիոսի և հատուկ հետազոտություն նվիրել դրան (1962): Լուվեցի համալսարանում նրան շնորհվել է Արևելքի պատմության ու բանասիրության դոկտորի աստիճան: Անմիջապես հրավիրվել է Հարվարդի (ԱՄՆ) համալսարանի վարչության կողմից որպես գրաբարի դասախոս (1963-ից): 1969-ից նա պրոֆեսոր է, 1973-ից առ այսօր՝ Մերձավոր արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ամբիոնի վարիչ:

Ռ. Թոմսոնը հեղինակ է 5-րդ դարի հայոց դպրությանը, մասնավորապես Ագաթանգեղոսին նվիրված մեկ տասնյակից ավելի մեծագրությունների: Մի քանի անգամ եղել է Երևանում, ուսումնասիրություններ կատարել Մատենադարանում, հանդես եկել հայագիտական նստաշրջաններում, աշխատակցել «Պատմա-բանասիրական հանդեսին»: Նրա աշխատասիրությանը են լույս տեսել Ագաթանգեղոսի (1976), Մովսես Խորենացու (1978), Եղիշեի (1982), Դավիթ Անհաղթի (Բ. Քենդալի հետ համատեղ, 1988) երկասիրությունների անգլերեն թարգմանությունները:

### ԳԵՎՈՐԳ ՄԿՐՏԶԻ ՆԵՎԸԱՆԿՑԵՆ

Ծնվել է 1926 թ. Չիտա քաղաքում: 1982-ին նրանց ընտանիքը փոխադրվել է Իրան, բնակվել են Թեհրան քաղաքում: Ավարտել է տեղի Ֆիրուզբահրամ միջնակարգ դպրոցը: 1946-ին հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան: Սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության (իրանական) բաժնում (1946—1951): 1952 թ. առ այսօր դասավանդում է

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում: Եղել է Արևելյան բանասիրության ամբիոնի վարիչ, արևելագիտության ֆակուլտետի դեկան: Այժմ գլխավորում է իրանական բանասիրության ամբիոնը: 1955-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1972-ին՝ դոկտորական դիսերտացիա:

Գ. Նալբանդյանը հեղինակ է պարսկերեն լեզվին նվիրված մի շարք ուսումնասիրությունների, ձեռնարկների, բառարանների՝ «Հին պարսկերեն» (1960), «Միջին պարսկերեն (պահլավերեն)» (1962), «Իրանական լեզուներ և բարբառներ» (1962), «Պարսից լեզվի քերականություն» (1980), «Պարսկերեն-հայերեն բառարան» (1988) և այլն:

Վերջին շրջանում Գ. Նալբանդյանը ձեռնարկել է հայ պատմիչների երկերի պարսկերեն թարգմանության գործը: Արդեն լույս են տեսել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ը (1984) և Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ը (1988): Երկու թարգմանություններն էլ օժտված են առաջաբանով և հարուստ ծանոթագրություններով:

### ԱԼԵՔՍԱՆԳՐ ԱՐԿԱՍԱՑԵ

Ծնվել է 1945-ին Վրաստանի Բուխարխի շրջանի Սաղուլիա գյուղում: 1970-ին ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Նույն թվականից առ այսօր աշխատում է Վրացական ԽՍՀ ԳԱ Ի. Զավախիշվիլու անվան պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտի ԽՍՀՄ ժողովուրդների հետ Վրաստանի փոխհարաբերությունների պատմության բաժնում, նախ որպես ավագ գիտական աշխատող, ապա առաջատար գիտական աշխատող: 1989 թ. պաշտպանել է «Վրաստանի և Հայաստանի քաղաքական փոխհարաբերությունները 9-րդ դարի կեսերից մինչև 11-րդ դարի 80-ական թվականները» խորագիրը կրող դոկտորական դիսերտացիան և ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Ա. Արդալաձեն հեղինակ է հայագիտական երկու մենագրությունների՝ «Քարթլիս Յխովրեբան» և Վրաստանի ու Հայաստանի փոխհարաբերությունները հնագույն շրջանից մինչև 12-րդ դարը» (1982) և «Անդրկովկասի քաղաքական կազմավորումների փոխհարաբերությունները 9—11-րդ դարերում» (1988), ինչպես նաև բազմաթիվ հոդվածների:

Նրա թարգմանությամբ է լույս տեսել «Հայկական ձեռագրերի հիշատակարանների տեղեկությունները Վրաստանի մասին 9—14-րդ դարերում» նշանակալից ժողովածուն (1978), որն օժտված է թարգմանչի ընդարձակ առաջաբանով և հարուստ ծանոթագրություններով:

### ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՎԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
Ա. Պատմության բնագրի հրատարակություններ	5
Բ. Աշխարհաբար թարգմանություններ	18
Գ. Թարգմանություններ այլ լեզուներով	17
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՎԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
Ա. Հայերեն	29
Բ. Այլ լեզուներով	39
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՎԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՅԼԵՎԱՅԼ ԵՎ ՆՐԱՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԵՐԿԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
Աշխարհացոյց	48
Գիրք պիտոյից	53
Շառեր	55
Թղթեր	58
Ծարականներ, տաղեր, երգեր, նվագներ	60
Այլ երկեր	63
ՄՈՎԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»-Ի ԵՐԿԱՍԻՐՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ	66



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ  
(Երկասիրություններ)

Հրատարակության և ներկայացրել  
համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Զ. Հ. Քամրազյան  
Նկարիչ և գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Քովմապան  
Տեխն. խմբագիր՝ Ա. Մ. Գյուզգյույան  
Վերատպող սրբագրիչ՝ Ս. Վ. Ավետիսյան

Հանձնված է շարվածքի 18. 07. 1991 թ.: Ստորագրված է տպագրության  
11. 09. 1991 թ.: Չափսը 84×108<sup>1/32</sup>: Թուղթ № 1: Տառատեսակը «Նորք»:  
Տպագրության եղանակը «Բարձր»: Հրատարակչական 4,2 մամուլ: Տպա-  
գրական 2,75 մամուլ=4,6 պայմանական մամուլի: Տպաքանակ 1000:  
Պատվեր 459: Գինը՝ 1 ո. 50 կ.:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մալյան փ. № 1:  
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна № 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արուսյան փ. № 52  
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.